Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 130

ք. Երևան **01.06.2021թ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 33/14.3/6372-2021, ՀՀ շրջակա միջավայրի 2/02.4/13314-2020, ՀՀ էկոնոմիկայի 03/17330-2020 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության և ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության, Քաղաքաշինության կոմիտեի 06/11.2/3495-2021 և Կադաստրի կոմիտեի ԴՍ/7434-2020 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ **ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Ջրաբեր բնակավայրի** հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Բյուրեղավան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից **5.5523 հա** արոտավայր (կադաստրային ծածկագիր՝ 07-055-0206-0006) փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ ընդերքօգտագործման համար տրամադրված հողեր գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Մ. Մկրտչյան